ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

COVID-19-ի պատվաստանյութ.

Ի՞նչ է անհրաժեշտ Ձեզ իմանալ

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տե՛ս www.immunize.org/vis կայքը

1. Ինչո՞ւ պատվաստվել:

COVID-19-ի դեմ պատվաստանյութը կարող է կանխարգելել **COVID-19** հիվանդությունը: Պատվաստումը կարող է օգնել նվազեցնել COVID-19 հիվանդության ծանրությունը, եթե հիվանդանաք:

COVID-19-ը առաջանում է կորոնավիրուսի պատճառով, այն կոչվում է SARS-CoV-2, որը հեշտությամբ տարածվում է մի անձից մյուսին: COVID-19-ը կարող է առաջացնել միայն մի քանի օր տևող թեթև և միջին ծանրության հիվանդություն, որը պահանջում է հոսպիտալացում, ինտենսիվ խնամք կամ թոքերի արհեստական օդափոխության սարք՝ շնչառությանը նպաստելու նպատակով: COVID-19-ը կարող է հանգեցնել մահվան:

Եթե վարակված անձն ունի ախտանիշներ, դրանք կարող են ի հայտ գալ վիրուսի հետ շփում ունենալուց հետո 2-ից 14 օրվա ընթացքում: Ցանկացած անձ կարող է ունենալ թեթև և միջին ծանրության ախտանիշներ:

- Հնարավոր ախտանիշները ներառում են ջերմություն կամ դող, հազ, շնչառության արգելք կամ շնչառության դժվարություն, հոգնածություն (հոգնածության զգացողություն), մկանների կամ մարմնի ցավեր, գլխացավ, համի կամ հոտի նոր կորուստ, կոկորդացավ, արյունախռնում կամ հարբուխ, սրտխառնոց կամ փսխում կամ փորլուծություն:
- Ավելի լուրջ ախտանիշները կարող են ներառել շնչառության դժվարություն, կրծքավանդակի մշտական ցավ կամ ճնշման զգացողություն, նոր շփոթություն, արթնանալու կամ արթուն մնալու անկարողություն, կամ գունատ, մոխրագույն կամ կապտավուն մաշկ, շրթունքներ կամ եղունգների շերտավորում՝ կախված մաշկի երանգից:

Տարեցները և որոշակի ուղեկցող բժշկական խնդիրներ ունեցողները (օրինակ՝ սրտի կամ թոքերի հիվանդություն կամ դիաբետ) ավելի հավանական է, որ կհիվանդանան COVID-19-ով:

2. COVID-19-ի դեմ պատվաստանյութ

(2023–2024 բանաձև) COVID-19-ի թարմացված պատվաստանյութը խորհուրդ է տրվում 6 ամսական և ավելի մեծ տարիքի յուրաքանչյուր անձի:

Նորածինների և 6 ամսականից մինչև 11 տարեկան տարեկան երեխաների համար COVID-19-ի պատվաստանյութերը հասանելի են ԱՄՆ Սննդի և դեղորայքի վարչության (Food and Drug Administration, FDA) Արտակարգ իրավիճակների օգտագործման համար նախատեսված թույլտվության շրջանակներում: Մանրամասների համար խնդրում ենք օգտվել ստացողների և խնամողների համար նախատեսված տեղեկաթերթերից:

12 տարեկան և ավելի մեծ անձանց համար COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութերը, որոնք արտադրվում են ModernaTX, Inc.-ի կամ Pfizer, Inc.-ի կողմից, հաստատվել են FDA-ի կողմից:

- **12 տարեկան և ավելի մեծ անձինք** պետք է ստանան FDA-ի կողմից հաստատված, 2023–2024 թվականների COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութի 1 դեղաչափ: Եթե վերջերս ստացել եք COVID-19-ի պատվաստանյութը, Ձեր ամենավերջին դեղաչափից հետո պետք է առնվազն 8 շաբաթ սպասեք, որ ստանաք 2023–2024 թվականների COVID-19-ի դեմ թարմացված պատվաստանյութը:
- **Բժշկական խնդիրներ ունեցող կամ իմունային համակարգի վրա ազդող դեղեր ընդունող որոշ մարդիկ** կարող են ստանալ COVID-19-ի դեմ պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափեր: Ձեր բժշկական ծառայությունների մատակարարը կարող է Ձեզ խորհուրդ տալ:

U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

12 տարեկան և ավելի մեծ որոշ անձինք փոխարենը գուցե ստանան COVID-19-ի մեկ այլ պատվաստանյութ, որը կոչվում է Novavax COVID-19-ի դեմ պատվաստանյութ, ադյուվանտ (2023–2024 բանաձև): Այս պատվաստանյութը հասանելի է FDA-ի Արտակարգ իրավիճակների օգտագործման համար նախատեսված թույլտվության շրջանակներում: Մանրամասների համար խնդրում ենք օգտվել ստացողների և խնամողների համար նախատեսված տեղեկաթերթերից:

3. Խոսե՛ք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարի հետ

Ձեր պատվաստումների ծառայությունների մատակարարին տեղեկացրեք, եթե պատվաստանյութ ստացող անձը.

- Ունեցել է **ալերգիկ ռեակցիա COVID-19-ի դեմ պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո**, կամ ունի որևէ **լուրջ, կյանքին սպառնացող ալերգիաներ**
- Ունեցել է **միոկարդիտ** (սրտամկանի բորբոքում) կամ **պերիկարդիտ** (սրտի արտաքին լորձաթաղանթի բորբոքում)
- Ունեցել է **բազմահամակարգ բորբոքային համախտանիշ** (երեխաների մոտ կոչվում է MIS-C, իսկ մեծահասակների մոտ MIS-A)
- Ունի **թույլ իմունային համակարգ**

Որոշ դեպքերում Ձեր բժշկական ծառայությունների մատակարարը կարող է որոշել հետաձգել COVID-19-ի դեմ պատվաստումը մինչև հաջորդ այցը:

Թեթև հիվանդություններ, ինչպես օրինակ, մրսածություն ունեցող անձինք, կարող են պատվաստվել: Անձինք, ովքեր միջին կամ ծանր հիվանդ են, սովորաբար պետք է սպասեն մինչև կազդուրվելը: COVID-19-ի ընթացիկ վարակ ունեցողները պատվաստվելու համար պետք է սպասեն մինչև հիվանդությունից կազդուրվելը կամ դադարեցված մեկուսացումը:

COVID-19-ով հիվանդ հղիները ծանր հիվանդանալու բարձր ռիսկի տակ են: COVID-19-ի դեմ պատվաստումը խորհուրդ է տրվում հղիներին, կրծքով կերակրողներին կամ այս պահին հղիանալու փորձ անողներին կամ ովքեր հետագայում գուցե հղիանան:

COVID-19-ի դեմ պատվաստանյութը կարող է ներարկվել այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ:

4. Պատվաստանյութից առաջացող ռեակցիաների ռիսկերը

- COVID-19-ի դեմ պատվաստումից հետո կարող են առաջանալ ցավ, այտուց կամ կարմրություն ներարկման հատվածում, ջերմություն, հոգնածություն (հոգնածության զգացողություն), գլխացավ, դող, մկանային ցավ, հոդացավ, սրտխառնոց, փսխում և այտուցված ավշային հանգույցներ:
- Միոկարդիտը (սրտամկանի բորբոքում) կամ պերիկարդիտը (սրտի արտաքին լորձաթաղանթի բորբոքում) հազվադեպ է պատահել COVID-19-ի դեմ պատվաստումից հետո: Այս ռիսկն ամենից շատ դիտարկվել է 12 տարեկանից 39 տարեկան տղաների շրջանում: Սրա տեղի ունենալու ռիսկը ցածր է:

Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բուժգործողություններից հետո, ներառյալ պատվաստումը: Ձեր բժշկին հայտնեք, եթե թեթև գլխապտույտ կամ տեսողության փոփոխություն ունեք կամ ականջներում զնգոց եք զգում:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ փոքր հավանականություն կա, որ պատվաստանյութը լուրջ ալերգիկ ռեակցիայի, այլ լուրջ վնասվածքի կամ մահվան պատճառ կհանդիսանա:

5. Ի՞նչ տեղի կունենա լուրջ ռեակցիայի առկայության դեպքում:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ, երբ պատվաստված անձը հեռանա կլինիկայից: Եթե լուրջ ալերգիկ ռեակցիայի նշաններ (եղնջատենդ, դեմքի և կոկորդի այտուցվածություն, դժվարացած շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն) եք նկատում, զանգահարեք **9-1-1** և տվյալ անձին մոտակա հիվանդանոց տարեք:

Անմիջապես դիմեք բժշկի, եթե պատվաստված անձն զգում է կրծքավանդակի ցավ, շնչահեղձություն կամ արագ սրտխփոց կամ այդպիսի զգացողություն, թրթռում կամ բաբախում COVID-19-ի դեմ պատվաստումից հետո: Սրանք կարող են լինել միոկարդիտի կամ պերիկարդիտի ախտանիշներ:

Ձեզ մտահոգող այլ նշանների առկայության դեպքում զանգահարեք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարին:

Անբարենպաստ ռեակցիաների մասին պետք է հայտնել Պատվաստանյութերի անբարենպաստ երևույթների վերաբերյալ հաշվետվությունների համակարգին (Vaccine Adverse Event Reporting System, VAERS): Սովորաբար այս հաշվետվությունը կներկայացնի Ձեր բժշկական ծառայությունների մատակարարը կամ դա կարող եք ինքներդ անել: Այցելեք VAERS-ի կայքէջ՝ **www.vaers.hhs.gov**, կամ զանգահարեք **1-800-822-7967**: *VAERS-ը միայն ռեակցիաների մասին հաղորդելու համար է, իսկ VAERS-ի անձնակազմի անդամները չեն տրամադրում բժշկական խորհրդատվություն:*

6. Վնասվածքների փոխհատուցման հակաքայլերի ծրագիր

Վնասվածքների փոխհատուցման հակաքայլերի ծրագիրը (Countermeasures Injury Compensation Program, CICP) դաշնային ծրագիր է, որը կարող է օգնել վճարել բժշկական խնամքի դիմաց և այլ հատուկ ծախսեր այն մարդկանց համար, ովքեր լուրջ տուժել են որոշ դեղամիջոցներից կամ պատվաստանյութերից, այդ թվում այս պատվաստանյութը: Ընդհանուր առմամբ, պահանջը պետք է ներկայացնել CICP-ին պատվաստանյութը ստանալուց հետո մեկ (1) տարվա ընթացքում: Այս ծրագրի մասին ավելին իմանալու համար այցելեք ծրագրի կայքէջ՝ **www.hrsa.gov/cicp** կամ զանգահարեք **1-855-266-2427** հեռախոսահմաարով:

7. Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Դիմեք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարին:
- Զանգահարեք Ձեր՝ տեղական կամ նահանգային առողջապահության վարչություն:
- Այցելեք Սննդի և դեղորայքի վարչության (Food and Drug Administration, FDA) կայքէջը COVID-19-ի տեղեկաթերթերի, փաթեթի ներդիրների և լրացուցիչ տեղեկությունների համար՝ **www.fda.gov/vaccines-blood-biologics/industry-biologics/coronavirus-covid-19-cber-regulated-biologics**:
- Կապվեք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (Centers for Disease Control and Prevention, CDC) հետ՝
  - Զանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** հեռախոսահամարով կամ
  - Այցելեք CDC-ի COVID-19-ի կայքէջ՝ **www.cdc.gov/coronavirus**:

Armenian translation provided by Immunize.org